ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

~~Ն 760-Ա/Ք,~~ ~~03.09.2015թ.:~~

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի N 10-Ն որոշման հավելված N 2-ի 30-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական դպրոցի 6-րդ դասարանի <<Ազգային երգ ու պար>> առարկայի ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:
2. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարին:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2015թ. սեպտեմբերի 3-ի N 760-Ա/Ք հրամանի

ԾՐԱԳԻՐ

հանրակրթական հիմնական դպրոցի

<<Ազգային երգ ու պար>> առարկայի

6-րդ դասարան

ԾՐԱԳԻՐ

Հանրակրթական հիմնական դպրոցի

<<Ազգային երգ ու պար>> առարկայի

/6-րդ դասարան, 51 ժամ/

Բացատրագիր

Ազգային երգն ու պարը, ինչպես մայրենի լեզուն, ազգի ինքնությունը, ինքնագիտակցությունն ու գոյությունը պահպանող միջոցներ են:

<<Ազգային երգ ու պար>> առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային արժեքներն են: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից է, առանց որի թերի կլինի ՀՀ քաղաքացու մտավոր և հոգևոր զարգացումը:

6-րդ դասարանում շարունակվում են նախորդ տարում սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի զարգացման ուղղությամբ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները: Սովորողները այս դասարանում ծանոթանում են համայնքային, ծիսական պարերգերին և պարերին, շարունակում են ծանոթանալ հարսանեկան և աշխատանքային պարերին և պարերգերին, խորացնում են գիտելիքները պաշտամունքային պարերի և պարերգերի մասին, շարունակում են սովորել ծիսական և մանկական երգեր, խաղերգեր և հայրենասիրական երգեր: Կարևոր տեղ է հատկացվում որսորդական պարերին և հատկապես ռազմապարերին:

<<Ազգային երգ ու պար>> առարկայի ծրագրային նպատակներն են.

- դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված, ստեղծագործ մարդ, ազգային երգ ու պարի գիտակ, ազգային մշակույթի գիտակ և կրող,
- հարգանք ներշնչել ժողովրդական երգարվեստի, պարարվեստի, ազգային և երաժշտական արվեստի դասական ավանդույթների, ժամանակակից ստեղծագործությունների նկատմամբ, ցույց տալ դրանց տեղը համաշխարհային արվեստի համակարգում:

. ազգային պարերի, երգերի և պարերգերի միջոցով ներկայացնել ազգային ավանդույթները:

<< Ազգային երգ ու պար>> առարկայի հիմնական խնդիրներն են

. Շարունակել ծանոթացնել հայ ազգային պարային շարժումներին

• շարունակել ծանոթացնել ազգային պարերգերին և դրանց առանձնահատկություններին

. զարգացնել ազգային պարեր պարելու կարողությունը

• զարգացնել երաժշտության արտահայտչամիջոցների և շարժումների միջև փոխադարձ կապը հասկանալու կարողությունը

• զարգացնել երաժշտական կերպարները շարժումների միջոցով արտահայտելու կարողությունը

• զարգացնել սովորողների ռիթմի զգացողությունը, պարելու գործնական կարողություններն ու հմտությունները

• կատարել շարժումային իմպրովիզացիաներ, ինքնուրույն ստեղծելով պարային տարրեր բեմականացնել պարերը:

<<Ազգային երգ ու պար>> առարկայի ուսուցման և դաստիարակության հիմնական սկզբունքներն են

• ազգայինից համամարդկայինին անցում

• երաժշտառիթմական գործունեության միջոցով պարային շարժումների, ամբողջական պարերի ուսուցում

• առարկայի ուսուցման գործընթացում ծիսական, մանկական խաղերգերի և խաղ-պարերի, կերպարների ստեղծագործական կիրառում:

. երգային և պարային կատարողական հմտությունների զարգացում:

<<Ազգային երգ ու պար>> առարկային 6-րդ դասարանում հատկացվում է տարեկան 51 ժամ, շաբաթը՝ 1,5 դասաժամ:

Թեմա 1. Ներածություն՝ երգ, պար, պարերգ տարանջատում և առանձնահատկություններ (1 ժամ)

Թեմա 2. Համայնքային ծիսական երգեր և պարերգեր (7 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Այս թեմայով աշակերտները խորացնում են իրենց գիտելիքները համայնքային ծիսական երգերի և պարերգերի մասին, իմանում են, որ այդ երգերը և պարերգերն ունեն իրենց առանձնահատկությունները, կատարման տեխնիկան և բովանդակությունը:

Հիմնական խնդիրները

. զարգացնել պարերը ռիթմիկ և ճիշտ կատարելու կարողությունը

• զարգացնել պարային շարժումներ կատարելու կարողությունը:

Ուսուցանվող երգերի ցանկ

Երկուս գնալ, երկուս դառնալ պարատեսակ (երկու տակ Գյոնդ.համայնքային ծիսական պարեր):

Վերվերի պարի այլ տարբերակ և բեմադրություն (պաշտամունքային պարերգ):

Մեր տան իտև (ժողովրդական երգ):

Հունձքի երգեր (ժողովրդական երգ):

Գյոնդ- Վերվերի պարերգերի կատարումը Մեր տան իտև և Հունձքի երգերի ուղեկցությամբ:

Թեմա 3. Պարերգերի շարժողական, երաժշտական և բառային տեքստեր և հարսանեկան պարեր (5 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Աշակերտներն իմանում են, որ պարերգերում շատ կարևոր տեղ է հատկացվում երաժշտական և բառային տեքստին, քանի, որ շատ կարևոր է հասկանալ պարերգերի իմաստը, բովանդակությունը: Անհրաժեշտ է նաև տիրապետել պարերգերի շարժողական հմտություններին՝ պարն ամբողջական և իմաստալի ցուցադրելու, պարային և բառային տեքստերը զուգադրելու նպատակով:

Հիմնական խնդիրները

- զարգացնել թեմայի հետ կապված երաժշտական և բառային տեքստն ընկալելու կա-րողությունը
- զարգացնել պարերգերի բնույթին և բովանդակությանը համապատասխան ռիթմական շարժումներ կատարելու կարողությունը
- ցույց տալ երաժշտության արտահայտչամիջոցների և շարժումների փոխադարձ կապը
- զարգացնել երաժշտական կերպարները շարժումների միջոցով արտահայտելու կարողությունը
- զարգացնել սովորողների ռիթմական զգացողությունը, շարժումներ կատարելու և պարելու գործնական կարողություններն ու հմտությունները

• ծանոթացնել հայ ազգային պարային շարժումներին
• զարգացնել երգչային ձայնը համապատասխան ձայնավարժությունների և երգերի կատարման միջոցով
• կատարել շարժումային իմպրովիզացիաներ, ինքնուրույն ստեղծելով պարային տարրեր
• ծանոթացնել ժողովրդական պարերգերին և դրանց առանձնահատկություններին:

Ուսուցանվող պարերգերի ցանկ

Պարերգերի շարժողական, երաժշտական և բառային տեքստերն ու նրանց ներդաշնակումը

Թագավորի գյոնդ

Շավալի (խնամիների պար):

Թեմա 4. Աշխատանքային երգեր, պարեր և պարերգեր (13 ժամ)

Թեմայի բովանդակությունը:

Այս թեմայի շրջանակներում երեխաները խորացնում են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները աշխատանքային երգերի տեսակների կատարման առանձնատատկությունների մասին, շարունակում են սովորել աշխատանքային պարեր և պարերգեր, ուսումնասիրում են դրանց կատարման առանձնահատկությունները:

Հիմնական խնդիրները

- զարգացնել թեմային համապատասխան նոր երգերի և պարերգերի կատարման կարողությունները
- կարողանալ ճիշտ վերարտադրել աշխատանքային պարերին բնորոշ շարժումները
- կարողանալ մաքուր ինտոնացիայով կատարել պարերգի երգերը:

Ուսուցանվող երգերի, պարերգերի և պարերի ցանկ

Աշխատանքային երգեր, պարեր

Էրիշտայի (պար)

Էրիշտայի (երգ)

Էրիշտայի (պարերգ)

Բարի լուսո (երգ)

Բուլուլ (պար)

Քաղհան կանեմ (երգ)

Թեմա 5. Հայ ավանդական երգն ու նրա տարատեսակները,

Պաշտամունքային պարեր և պարերգեր (10 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Այս թեմայի շրջանակներում երեխաները խորացնում են իրենց գիտելիքները հայ ավանդական երգի ու նրա տարատեսակների մասին. ոչ պրոֆեսիոնալ՝ ավանդական ժողովրդական երգեր, կիսապրոֆեսիոնալ՝ գուսանա-աշուղական և պրոֆեսիոնալ՝ կոմպոզիտորական երգեր: Շարունակում են խորացնել պաշտամունքային պարերի և պարերգերի իմացությունը: Սովորողները պետք է իմանան հայոց բնապաշտության դարաշրջանից եկած ավանդույթներն ու հասկանան նրա շաղկապվածությունը մեր ավանդական մշակույթի հետ: Պետք է իմանան խոյերի պաշտամունքը հայ իրականության մեջ և նրա ժամանակակից արտացոլքը հայ ավանդական մշակույթում:

Սովորողները պետք է սովորեն խոյերի, կամ այծերի,՝քոշերի պաշտամունքից ծնված պարային մեծ շերտի՝ Քոչարիների նշանակությունը, մասնավորապես՝ <<Սղերդի Քոչարի>> պարի ծագումնաբանությունը, շարժումների առանձնահատկություններն ու նշանակությունը: <<Տալտալա>> պարերգի երգային տեքստը և ստուգաբանությունը:

Հիմնական խնդիրները

- Շարունակել ծանոթացնել հայ ավանդական երգերի և նրա տարատեսակների հետ
- Ծանոթացնել նոր պաշտամունքային պարերի և պարերգերի հետ
- Զարգացնել թեմայի հետ կապված երաժշտական և բառային տեքստն ընկալելու կարողությունը
- Զարգացնել պարերի և պարերգերի բնույթին և բովանդակությանը համապատասխան շարժումներ կատարելու կարողությունը
- Զարգացնել երաժշտության արտահայտչամիջոցների և շարժումների միջև փոխադարձ կապ զգալու կարողությունը
- զարգացնել երաժշտական կերպարները շարժումների միջոցով արտահայտելու կարողությունը:

Ուսուցանվող պարերի և պարերգերի ցանկ

Հայ ավանդական երգն ու նրա տեսակները

Խոյի պաշտամունքը հայ իրականության մեջ և նրա ժամանակակից արտացոլքը հայ ավանդական մշակույթում

Սղերդի քոչարի

Տալտալա

Թեմա 6. Ծիսական և մանկական երգեր, երգերի ժանրերը, խաղերգեր և հայրենասիրական երեգեր (9 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Սովորողները պետք է խորացնեն իրենց գիտելիքները ծիսական, մանկական երգերի, խաղերգերի և հայրենասիրական երգերի, դրանց նշանակության և կատարման հմտությունների մասին ու սովորեն նրանցից առավել տարածված նմուշները: Ավանդական մանկական խաղերգերի կատարումը կզարգացնի երեխային մեծացնելու, ֆիզիկական և մտավոր զարգացվածությունը բարձրացնելու և նրա բնականոն աճն ապահովելու գործընթացը: Հայրենասիրական երգերի կատարումը կդաստիարակի երեխաներին հայրենասիրությամբ, հերոսությամբ, հայ լինելու հպարտությամբ, որը նրանց մեջ կստեղծի ազգային մշակույթը իմանալու, պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու արժեքը:

Հիմնական խնդիրները

- Ծանոթացնել ծիսական, մանկական երգերի, դրանց ժանրերի, խաղերգերի և հայրենասիրական երգերի հետ
- Զարգացնել դրանք հասկանալու, մեկնաբանելու և կատարելու հմտությունները
- Զարգացնել հայրենասիրական երգերը կատարելու և արժևորելու կարողությունը
- Դաստիարակել սեր դեպի ազգային մշակույթը:

Ուսուցանվող երգերի և պարերի ցանկ

- Համբարձման երկուշաբթի
- Ախ Նինար
- Վարժարանից ընկերներ
- Առաքել, Մուշեղ

Թեմա 7. Ազգային ծեսեր, որսորդական պարեր և ռազմապարեր (5 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Սովորողները պետք է խորացնեն իրենց գիտելիքները ազգային ծեսերի, որսորդական պարերի և ռազմապարերի մասին: Պետք է իմանան տվյալ ծեսին համապատասխան մշակութային նմուշի առանձնահատկությունը, կատարման տեղի դերի ժամանակի կարևորությունը և նշանակությունը: Հայոց իրականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում որսորդական պարերն ու ռազմապարերը, որտեղ պատկերված են մեր դարավոր կենցաղը, և մեր երկրի ազատության, անկախության համար մղված հերոսական ճակատամարտերը, տրված են նաև դրանց նախապատրաստվելու կարևորագույն մշակութային նմուշները: Սովորողը իմանալով զինվորի մարմնակրթական առանձնահատկությունների տարբերակումները պետք է տիրապետի տվյալ պարանմուշներից մի քանիսին:

Հիմնական խնդիրները

- Ծանոթացնել ազգային ծեսերին, ծիսական երգերին և պարերգերին
- Ծանոթացնել որսորդական պարերին և ռազմապարերին
- Զարգացնել և կատարելագործել սովորողների կատարողական հմտությունները ազգային, ծիսական, որսորդական պարերի և ռազմապարերի ուսուցման ընթացքում
- Ազգային և ծիսական երգերի, պարերի և պարերգերի կատարման ընթացքում զարգացնել սովորողների ստեղծագործական կարողությունները:
- Ազգային, ծիսական երգերի ու պարերի կատարման միջոցով բարձրացնել սովորողների մեջ ազգային ոգին:

Ուսուցանվող երգերի և պարերի ցանկ

- Ծեսեր, ծիսական երգեր, պարեր և պարերգեր
- Քեռձի (բեմադրական և կառուցվաքային լուծումներ), այլ տարբերակներ,
- Յարխուշտա

Թեմա 8. Ամփոփում (1 ժամ)

Թեմայի բովանդակությունը

Պետք է կատարել ամբողջ անցած նյութի ամփոփում, վերլուծություն և եզրահանգում, հետագայում անելիքները ճշտելու և պլանավորելու համար: